

զարարութեան վերայ, սակացն իւր զիմաց վե- | լուռ ու մունջ Պուրլիխով հետ բաղուկ բազ-  
րայ կը տեսնուէր հոգոյն կրած յուզումն : | կի տուած երկուքն ալ ամփիթատրոն մոտան :

(Շարայարելի)

## ԿԵՍԱՐ ԿԱՆՏՈՒ ԻՏԱԼԱՑԻՈՑ

ԽԵՆ ՊԱՏՄԱԳՐԻ ԽՆՆՍՆԱՄԵԱԿ

**U**նտումնալի և սրտաշարժ էր  
իւր պարզութեանը մէջ այն  
տեսարանն, որ տեղի ունեցաւ  
գեկտ. 8-9ին Միլան քաղաքի  
Մորդինի թաղին տնակին մէջ.  
ուր կէս գարէ ի վեր կ'ապրի, այս-  
ինքն՝ կը խորհի և կ'աշխատի կե-  
սար կանոտու, իտալական աղջին և  
ներկայիս մեծագոյն փառք հանդիսա-  
ցոյ հինաւուրց ծերունին նոյն ամսոյն  
հնգին՝ աւարտեց նա իւր ինննաս-  
մեակը, բայց իր վերայ պանչացողք՝  
հին սովորութեամբ մը՝ ամսոյն ութե-  
րորդ օրը, այսինքն քաղին պաշտպան  
սրբոյն Ամբրոսիոսի յիշատակին տո-  
նախիմբեցին : Այդ օրը բազմութիւն  
քաղաքացւոց տիկնայց, տղայոց, եկած  
խոնած էին այն սրահներուն մէջ, ուր  
մեծամեծ և նշանաւոր անձինք՝ իտա-  
լացիք և օտարք, եկեր էին իրեն յայցե-  
լութիւն և ի մեծարանն, թիէրի և  
լիսցի նմաներէն սկսեալ՝ մինչ ի Բալ-  
զակ և կայսրն Բրազիլիոյ, Բալբոյ (Bal-  
bo), Ռոզմինի, և Մտոպանիէ՛ մինչև  
ի ծիրանաւորն լավիթըրի. անհամար  
արուեստագէտք և ուսումնականք :

Հոչակաւոր ծերունին բազմած ա-  
նոնց մէջ, համեստութեամբ կ'ընդու-  
նէր առ ինքն ուղղուած մաղմանաց  
և մեծարանաց հետ՝ փունջ փունջ ծաղ-  
կանց. խոհական ազնուածուք գլուխն  
ծածկուած երկայն՝ բայց ոչ դեռ

ևս սպիտակացեալ հերօք, ամենուն  
սքանչանաց առիթ էր. Առողջ կեր-  
պարանքն՝ որ մսիթարութիւն է զին-  
քըն յարգողաց, կը խոստանայ տա-  
կաւին երկայն տարիներ. իսկ զուար-  
թամիտ և քաղաքավար խօսակցու-  
թիւնն՝ հաճոյական է և գիտնական  
ինչպէս ամէն ատեն :

Լաւ կ'ըսէ. գեր. իսիդորոս կարինի  
(վատիկանեան գրչագրաց բազմա-  
հմուտ մատենապետն), թէ «կենաց կոր  
գիծը. կը կատարէ, աշխատելով միշտ  
ճշշմարտին և բարւոյն համար. կարծես  
թէ առանց իր անդրադառնալուն. և  
լատին քերթողին ըսածին պէս, տա-  
րիները գիզուած են ուսուցը վերայ  
առանց շշոնջ մը հանելու. tacitus se-  
nescimus annis (¹).

Ցղայք՝ մաղթանաց պարերգ մը եր-  
գեցին. յետոյ բազմութիւն օրիորդաց  
իբրեւ իրարու մրցակիցք՝ անուանի  
անձին գրտուածներէն արձակ և ոտա-  
նաւոր հատուածներ արտասանեցին :  
Եւ որովհետև ինքն նկատել տուաւ թէ  
ամենքն ալ սրտաշարժ կտոր մ'ընտ-  
րեր էին, պատասխանեցին իրեն՝ թէ  
զարմանալու բան չի կայ, զի իւր գը-  
րուածներէն առնուած էին անոնք. և  
որոց մէջ սիրտն է նախկին տեղն գը-  
րաւողն :



Perseverando

Cesare Piantigiani  
B I U W P B I U L I N N Z

Fotoincisione Fli Armanino - Genova.

Մեծ ազգեցութիւն ըրին վրան ծերունոյ մը բարեմաղթութիւններն , որ էր լէվա , պետական խորհրդարանին՝ իր նախկին աշակերտն . սա յիշեցուց թէ ինչպէս վաժտուն տարի յառաջ՝ երբ կանուու ուսուցիչ էր Սրբոյն Աղեքասնդրի կոչուած (այժմ Բեկարիա Վեսարիա) կրթարանին մէջ , օր մը մեր երիտասարդ ուսուցիչը դասատունէն գուրս կանչուեցաւ . եկաւ և այլ եւս չի դարձաւ : Ուսումնարանին պաշտոնեայն եկաւ ծանուցանելու , թէ ցատուցիչն հիւանդացեր է : ի՞նչ հիւանդութիւն . զինք կանչողն աւսուրիական ոստիկանութեան պաշտօնեայ մ'էր՝ ի բանտ տանելու զինքը , ուր ամիսներով քաւեց հայրենեաց վերայ ունեցած սէրն և աշխատութիւնը :

Ուսումնական աշխատութեան սենեակը , որոյ ամէն կողմը լի է գրքերով , կը տեսնուի գեղեցիկ մագաղաթ մը՝ ճոխ պարունակի մէջ , զոր ի կանտուէ հիմնեալ լումբարդեան պատմական ընկերութիւնը իրեն կը նուիրէր : Մագաղաթի վերայ հետեւեալ վերտառութիւնը գրուած էր , Բեկորամիի գրչով .

Կեսար կանուու — նրբախօս մատենագիր , վիպասան իր երեւակսյութեամբ , պատմագիր հուշականուն , աննկուն եռանդեամբ նուիրեց ինքզինը գիտութեանց ամէն մասին , — եւ մոհքէ ոնով և բանից կորովով , — տարերը քննեց իրու վեհագոյն ուսուցիչ , — ընդարձակ պատկերի վերայ ստուերագրեց մարդկային ազգի պատմութիւնը . — Իտալացոց փառքը ու աղէտները՝ ծափահարուած հատորներով . իրատեց ժողովուրդը խոհական խորհուրդներով շափաւորութեան , սիրոյ , ինսատութեան եւ կրօնից . անընդհատ աշխատանքով . Եւ մըրկալից ժամանակներէ յոգնած՝ բայց ոչ լքեալ յստակ եւ պայնառ մտքով , պայօր ի 5 դեկտեմբերի 1894 , կը լրացնէ կենաց իննաներորդ տարին : Համբաւառոր պատմագիրն հովանաւորութեամբ ծեւացած լրմ-

բարդական պատմական ընկերութիւնն , այս համադիսական օրուան մէջ կը բազմարդիկն նախագահին երախտապարտ մեծարանաց ցոյց կը մատու ցանէ .

Վարչական խորհրդոյ անդամք

Փելիքս կալվանի .  
Կեսար վինետատի .  
Խմնանսուէլ Գրեպափի .  
Կարլոս Ե . Վիսկոնտի .  
Ղուկաս Բելտրամի .  
Եմիլիոս Սելեստի .  
Եմիլիոս Մուտտա .

Բաց աստի՝ ուրիշ ամենագեղեցիկ մագաղաթ մ'այլ ընծայած է ճարտարն Յակովի (Սամր) որ՝ 1804 կանուուի ծննդեան թուականին հագուստով կին մը նկարեր էր . և այսօրուան նորեկուկ արդուզարդով ուրիշ կին մը , ու կապցոյ ցուանկարի վերայ հին ատեն գործածական ծիթոյ կանթեղ մը , հսկող ուսումնասիրաց սիրելի բարեկամը , և 1894 ի գիշերենը լուսաւորող ելեկտրական կանթեղն :

Սեղանատախտակի մը վերայ գրուած է Անդրէաս ֆերրարի ծիրանաւոր արքեպիսկոպոսին պատկերը , իրմէ նուիրեալ առ կեսար կանուու : Ժարէցին նախընթաց օրը Միհանուեկեցույն նոր առաջնորդն՝ ծիրանաւորանուանի քաղաքացւոյն այցելութիւն մը տուաւ իր բարեմաղթութեամբք . և պատմագիրն յերկար խօսեցաւ հետք՝ կամոյի և Բրիվիոյի թեմերուն վրայ , ուր ծնած է , յիշելով տեղուանքը , գէպէկերը ու անձինքը :

Անդրէաս վէրգա , ծերակուտի անդամն , իւր գրեթէ հասակակցին լատին ու խոալ լեզուով բանաստեղծութիւններ ընծայեց , վասն զի ութմանմեայ գիտնականն՝ դեռ ևս կը սփոփուի մուսայից ընկերութեամբ . « Սիրելի կեսար , — պայպէս գրեկով առ նա . —

ծիրանաւորն Անդրէաս՝ համանուն բը-  
ժիշկը մոռցընել տուաւ քեզ. և այս  
ընական էր. Չեմ ուզեր որ ծիրա-  
նաւորն՝ ծննդեանդ տարեգարձին,  
այդ կերպով վնասէ ինձ »: Ստորա-  
գրեալ. Անդրէաս թժիշկ:

Հեռագրաց և նամակներու բլուր  
մը դիզուած էր. իտալիոյ ամէն պատ-  
մական ընկերութիւնք մաղթանք ուզ-  
դեր էին առ կանտու:

Տարարինի հեռագրեց. — « Ի  
դիմաց պատմական կաճառին և Ցու-  
կանեան պատմական Յանձնաժողովով յն՝  
կ'ուզեմ իտալիոյ պատմական ուս-  
մանց անուանի հինաւորց ծերուն-  
ոյն՝ զուարթ բարեմաղթութիւն և  
« Բարեբաստութեամբ լրանալով այ-  
սօր իննանամեակը՝ իր անուանի կա-  
ճառակցին կանուի, կրուսկայի ճե-  
մարանն՝ անկեղծ մեծարանաց մաղ-  
թանք և ուրախակցութիւններ կ'ա-  
ռաքէ »: Ստորագ. « Նախահիւպատոս  
Միլանէսի »:

Ի Հոռոմէ. — « Հայրենեաց պատ-  
մութեան Հոռոմէական ընկերութիւնը՝  
կ'ուզէ մեծարանք իր ողջոյնն առ  
մեծամբաւ իննանամենի պատմաթիրն »:  
Ստորգ. « Հուգոլ Բալզանի Նախա-  
գահ »:

Ի Փլորենտիայէ. — « Առ հրայախ  
իննանամեայն՝ որ ոչ միայն համբա-  
ւովն՝ այլ և ժամանակաւ կը յաղթա-  
նակէ, ուրախակցութիւն և մաղ-  
թանք »: Ստորգ. « Պիոս Ռիայինա »:

Հեռագրեցին այլ և այլ ուսումնա-  
կան ընկերութիւններէ զատ, իր միակ  
ողջ թացած եղբայրն, և ուրիշ շատեր :

Իտալական պագային ժողովով երես-  
փոխան Ոգիսեւ Պապա բարեմաղ-  
թութիւններ ուզեց առ անուանի և  
հայրենասէր պատմիչն . Աղեքսանդր  
Ռոսսի երեսփոխանն՝ ողջունեց հինա-  
ւորց բարեկամը, — Կորդելլի ու-  
սուցապետն՝ կոչելով զնա. « Գերա-  
գոյն գաստիարակ իտալական երիտա-  
սարդութեանն և այլն և այլն »:

Բոնասի կոմն՝ իրրու յանձնակա-  
տար Միլանու՝ նոյն քաղաքին կող-  
մանէ մաղթանք և խնդակցութիւն  
ներկայացուց, առ որ կանտու հար-  
ցուց և տեղնիտեղն ծանօթացաւ իրմէ  
ժողովրդեան և շրջակայից վիճակը:

Զայնակից եղան հասարակաց ու-  
րախութեան և մաղթանաց՝ քաղա-  
քապետն Վինսոնէր, դատաստանական  
ատենին նախագահն Դոնա և Բրիւիոյ  
իր ծննդավայրին Մնդիկոսն Դելա-  
կունոյ. իսկ կաւալուտի այսպէս հե-  
ռագրեց ի Հոռոմէ. — « Իմ կողմա-  
նէս բարեմաղթեցէք զարմանալի ծե-  
րունոյն, որոյ տարելիցը կ'ողջունէ  
իտալիա, որ 1914ին իտալիոյ նորա-  
գոյն պատմութիւնն հրատարակէ՝ իր  
դժուարին ժամանակացը, և թէ ինչ-  
պէս գիտցաւ վայելչապէս ներկայա-  
նալ նոր գարուն »:

Ծերունի պատմագիրն իւր իննըս-  
նամեկի առթիւ գիմեց առ սրբազն  
Քահանայապետն Լեւոն Ժի, ինդրե-  
լով անոր հայրապետական օրհնու-  
թիւնը, և նա սիրալիր պատասխա-  
նով մը ողջունեց և օրհնեց վաստա-  
կաւոր ծերունին:

Յաւարտ հանդիսին ամենայն ոք  
յուզեալ սրտիւ հեռացաւ՝ զաշխարհս  
իւր մէջ պարունակող տունէն, կրկնե-  
լով այն խօսքերը՝ զոր գեռ երեք ան-  
խոնջ պատմագիրն կը գրէր նոր ծաղ-  
կաքաղին մէջ, Մոնտեսկիէսոյի յիտա-  
լիա ըրած ճանապարհորդութեան  
մ'առթիւ, իր անձին վերաբերելով հին  
պատմիին խօսքն, թէ « կրած տհա-  
ճութեանց մէջ՝ ուսմունքն ամեզօրա-  
ւոր գեղ մ'եղաւ ինձ, փորձած ըլ-  
լարով որ ժամ մը ընթերցմանէ յե-  
տոյ՝ անկարելի է որ չի փարատին  
անոնք »:

Այս ուսման մէջ արժան է փնտուել  
կեսար կանտուի երկար և գործու-  
նեայ կենաց գաղտնիքը, որով ոչ միայն  
գրական գործունէութեամբն զարմա-  
նալի եղաւ, այլ և զանազանութեամբ

և ալիեզերականութեամբ զորս գիտ-  
ցաւ իւր կաղամարին մէջ ամփոփել  
շրս բնորոշ յատկութեամբ՝ այսինքն  
է անդդիական հաստատամութեամբ,  
գերմանական համբերութեամբ, գաղ-  
ղիական պատրաստականութեամբ և  
իտալական չափով։ Աւելցընենք մեր  
կողմանէ, որ երբ՝ 1848ին, ի վենե-  
տիկ գումարեցաւ իտալացւոց աղ-  
գային գիտնական հոչակառը ժողովն  
որոյ՝ թէ ոչ Նախագահ՝ այլ Նախա-  
գահի ատենադպիր բերան և առաջ-  
նորդ էր ինքն կեսար կանու, ըն-

տաներար ծանօթացաւ մեր Միսիթա-  
րեան Միաբանից հետ, յորոց՝ այն  
ժողովոյն ընկերագիր եղողք և ապ-  
րոդք՝ իրենց նորահաս եղբարց հետ,  
փափագին՝ իր այս դոյզն ծանօթու-  
թիւնը, հանդերձ իր կենդանագրաւն,  
իբրեւ անմոռաց հաւասարի յարգա-  
նաց իր արժանեացն, և նոյզի հին բա-  
րեկամութեան, ընդունի բազմարդիւն  
և պանծալի Նեստորն ներկայ իտա-  
լական դպրութեանց և համաշխարհի  
պատմագրաց։ Վասահ եմք որ մեր աղ-  
գային բանասէրք ալ ձայնակցին մեզ։

### ՏԱՐՈՒԻՆՈՒԱԿ ՀԱԿԱԿՐՈՒԹԻՒՆՔ

↔-•-•-•-↔

Մարդկութեան մէջ կայ առանձին  
համակրութիւն կամ հակակրութիւն  
մի, թէ ըլլայ նկատմամբ անձանց և թէ  
անշունչ առարկայից։ Մեր հոգւոյն՝  
կամ լաւ եւս ըսել՝ մեր կազմութեացն  
այս առանձին բնութիւնն նկատմամբ  
արտաքին տպաւորութեանց կը կոչուի  
թեհիկ խառնուած։ Յիշենք հոս այլեւայլ  
մարդկանց մի քանի հետաքրքրաշարժ  
համակրութիւն կամ հակակրութիւն-  
քը։

Մեդեկեանց Մարիամի համար  
կը պատմուի, թէ վարդը հոսութաւա-  
լուն պէս խկոյն վրան մարելիք կու  
գար, և ընդ հակառակն կարգէ գուրս  
կ'ախորժէր նարգէսր և յակինթը։  
Հոչակառորն Երազմնո՞ որքան այլ  
Ռոստէրդամի մէջ ծնած էր, սակայն  
այն աստիճան հակակրութիւն մ'ունէր  
ամեն տեսակ ձկանց, որ անոնց հոտն  
միայն բաւական էր իրեն վրայ չերմ  
բերելու։ Ամբոխոսիո Պարէց կը պատ-  
մէ իրեն յանձնուած հիւանդի մը հա-  
մար որ չէր կրնար տեսնել օձանուկ ա-  
ռանց սարսուռ զգալու։ Յովկէփ Ակա-  
լիքերոյ և Պետրոս Աբանոցի ո եէ կեր-  
պով չէին կրնար իրենք զիրենք վար-  
ժեցընել կաթ ուտելու։ Կին մը խորո-

ված իսեչափառ տեսնելով կը մարէր.  
ուրիշ մ'այլ ծածան (carpione) տեսնե-  
լով վրան ցնցիւն մի կը զգար ։ Կար-  
գանոյ հաւկիթ մը տեսնելով՝ վրան այլ-  
այլութիւն կու գար։ Պոլոնիոյ Լա-  
դիսլաւոս թագաւորն իննաոր մի տես-  
նելով շատ գէշ կը զգար։ Խակ եթէ  
սոյն պտուղ Գաղղիոյ Փրանկիսկոս թա-  
գաւորի Քենսնէ քարառողարին ընծայ  
տրուէր՝ իսկոյն քթէն արիւն կու  
գար։ Անդգիոյ թագաւորն Հենրիկոս  
Գ իւր սենեկին մէջ չէր կրնար կա-  
տու տեսնել։ ուրիշ գուքս մ'այլ աւր  
որ այս կենդանին տեսնէր՝ շտապաւ  
կը փախչէր նոյն տեղէն։ Աւստրիոյ  
ֆերդինանդոս կայսեր արքունեաց հը-  
րամանատարն կատուի միաւելը միայն  
լսելով խկոյն քթէն արիւն կու գար,  
թէպէտե բաւական հետու այլ գտուէր  
այս անվխաս կենդանին։ Պ. Դէ լ'Անկը  
կը պատմէ մարդու մը վրայօք, թէ  
միայն անդամ մը ողնի տեսնելով  
այնքան զարհուրեցաւ, որ այնուհե-  
տեւ շատ տարիներ կը տանջուէր ե-  
րեւակայելով՝ թէ այս կենդանին է  
որ իւր փորստիքը կամաց կամաց կը  
կրծէ, նոյն հեղինակն կը պատմէ նաեւ  
զինուրական արդեամբք անուանի